# ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <*ԿՈՏ-ՄԱԾՁԲ-25/5*>

ք. Հրազդան --- հունվարի 2025 թ.

ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմը, ի դեմս ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմը **գլխավոր քարտուղար՝ Լևոն Պետրոսյանի**, որը գործում է մարզպետի աշխատակազմի կանոնադրության հիման վրա(այսուհետև <<Պատվիրատու>>), մի կողմից, և ԱՁ «Հմայակ Միրզոյանը», ՀՎՀՀ- 35207868, **ի դեմս տնօրեն Հ.Միրզոյանի** այսուհետ՝ <<**Կատարող**>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան

1.Պատվիրատուն հանձնարարում է,իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը(ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի ( այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների :

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն՝

ա) չընդունել ծառայությունն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող որակի ծառայությունով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայությունի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը :

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը,եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանգիրը

Կատարողի կողմից պայմանգիրը խախտելը էական է համրվում,եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին ,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին :

2.2.2 Ծառայության արդյունքը ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները,իսկ ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը :

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովվել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանգրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրությամբ:Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկողմ հաստատված փաստաթղթով՝նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման –ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման –ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին:Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման –ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները,

բ)Կատարողի նկատմամբ կիրառվում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման–ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման–ընդունման արձանագրությաւն մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին տրամադրում է իր կողմից հաստատված հանձնման–ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը 400 000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծաղսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու,իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջցավ:Դրամական միջոցների փողանցումը կատարվում է հանձնման –ընդունման արձանագրության հիման վրա՝պայմանագրի վճարման ժամանակացույցով(հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ,ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեղնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յութաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանփվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա,սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայությունի ծավալների կամ ձեռք բերվող ծառայությունի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայությունի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի

---

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

վերացել ծառայությունի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայությունի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայությունի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայությունի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: 8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 22 էջից,կնքվում է 2 օրինակից,որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:Սույն պայմանագրի N1,N2,N3 և N3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը,յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի 1 օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ՝ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ Կոտայքի մարզպետարան | **ԱՁ«Հմայակ Միրզոյան»** |
| ք.Հրազդան, Կենտրոն վարչ.շենք | **Ք.Երևան,Արագածի փողոց 26/14** |
| **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** | **«Ինեկոբանկ» բանկ ՓԲԸ** |
| **900121120050** | |
| հվհհ 03029935 | **h/h 2051232153571001** |
| Մարզպետի աշխատակազմի | հվհհ 35207868 |
| գլխավոր բուհալտար Լ.Պետրոսյան | **տնօրեն՝Հ.Միրզոյան** |
| /ստորագրություն/ | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ

Հավելված N 1
« » հունվարի 2025 թ. կնքված
«ԿՈՏ-ՄԱԾՁԲ-25/5» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | մատուցում |
|---|---|---|---|---|---|---|
| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Չափման միավորը | Ընդհանուր գինը/ՀՀ դրամ/ | Ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը* |
| 1 | 50111120-2 | դրամ | 400 000 | 1 | ՀՀ Կոտայքի մարզպետի աժխատակազմ ք.Հրազդան,Կենտրոն,Վարչական շենք | 2025թ. ընթացքում ուժի մեջ մտնելու օրվանից սկսած Կապարողը ծառայությունը մատուցում է ըստ Պատվիրատուի պահանջի,պահանջի ծագման մասին տեղեկանալու օրվանից 20 օրվա ընթացքում: |

| Տեխնիկական բնութագիրը | Միավորի գինը |
|---|---|
| Canon IR2420 պատճենահանման քարտրիջի լիցքավորում | 8000 |
| Canon IR 2420 պատճենահանման մեքենայի թմբուկի փոխարինում առանց լիցքավորման՝ ներառյալ թմբուկը | 8000 |
| Canon IR 2420 պատճենահանման մեքենայի քարտրիջի մագնիսական լիսերի փոխարինում՝ առանց լիցքավորման,ներառյալ մագնիսական լիսերը | 1000 |
| Canon IR 2420 պատճենահանման մեքենայի քարտրիջի չափի դանակը՝ առանց լիցքավորման,ներառյալ չափի դանակը | 1000 |
| Canon IR 2420 պատճենահանման մեքենայի քարտրիջի ռետինե լիսերի փոխարինում՝ առանց լիցքավորման,ներառյալ ռետինե լիսերը | 1000 |
| Canon IR 2420 պատճենահանման մեքենայի քարտրիջի մաքրող դանակի փոխարինում ՝ առանց լիցքավորման,ներառյալ մաքրող դանակը | 1000 |
| Canon IR 2420 պատճենահանման մեքենայի վառարանի թերմոժապավենի փոխարինում ներառյալ թերմոնտաժումը | 2000 |
| Canon IR 2420 պատճենահանման մեքենայի ռետինե գվառարանի գլանի փոխարինում ներառյալ ռետինե գլանը | 2000 |
| Canon IR 2420 պատճենահանման մեքենայի մայրական սալիկի(Formater) փոխարինում ներառյալ մայրական սալիկը | 8800 |
| Canon IR 2420 պատճենահանման մեքենայի թուղթ քաշող գլանի փոխարինում ներառյալ թուղթ քաշող գլանը | 4200 |
| Canon IR 2420 պատճենահանման մեքենայի լուսածրիչի վերանորոգում կամ փոխարինում ներառյալ լուսածրիչը | 6300 |
| HP 5590 սկաների վերանորոգում առանց պահեստամասերի | 3200 |
| Մոնիտոր LCD լամպի փոխարինում ներառյալ լամպը 19'' | 4800 |
| Մոնիտորի վերանորոգում /Ֆոկուսի կարգավորում,գունահամատեղող հանգույցի կարգաբերում/ | 4800 |
| Մոնիտորի վերանորոգում /վնասված մասերի փոխարինում/ | 2000 |
| Տպիչի մայրական սալիկի փոխարինում նորով ներառյալ մայրական սալիկը(HP Leserjet 4010)տպիչի համար կամ համարժեքը | 8000 |
| HP Leserjet 1010, HP Leserjet 1018, HP Leserjet P2015 n, Canon I sensys MF211, HP Leserjet 1160,LBP 6030B,LBP 6030,MF 4410, MF 4010, LBP 6030dn, Canon LBP3010, Canon MF211,HP Leserjet1200, HP Leserjet2035, Canon MF211, Canon MF4730, Canon MF4018,տպիչների քարտրիջների լիցքավորում/ներառյալ պահեստամասերը/,անհրաժեշտության դեպքում նոր քարտրիջով փոխարինում: | 4500 |
| Պատճենահանման մեքենայի (Canon IR2420) քարտրիջների լիցքավորում/ներառյալ պահեստամասերը/ | 9000 |
| Canon IR2420 պատճենահանման մեքենայի քարտրիջի լիցքավորում | 8000 |
| Canon IR2420 պատճենահանման մեքենայի թմբուկի փոխարինում առանց լիցքավորման՝ ներառյալ թմբուկը | 8000 |
| Canon IR2420 պատճենահանման մեքենայի քարտրիջի մագնիսական լիսերի փոխարինում՝ առանց լիցքավորման,ներառյալ մագնիսական լիսերը | 1000 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Կոտայքի մարզպետարան
ք.Հրազդան, Կենտրոն մարզ,շենք
ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն
900121120050
հաշիվ 03029935
Մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար Լ. Պետրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
ԱՁ«Հմայակ Միրզոյան»
Ք.Երևան,Արագածի փողոց 26/14
«Ինեկոբանկ» բանկ ՓԲԸ
հ/հ 20512321535710001
հաշիվ 35207868
տնօրեն Հ.Միրզոյան

(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 3*
*« » հունվարի 2025 թ. կնքված*
*«ԿՈՏ-ՄԱԾՁԲ-25/5» ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | *50111120-2* | *Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություն* | - | *98836* | *98836* | *200120* | *200120* | *200120* | *296508* | *296508* | *296508* | *400000* | *400000* | *400000* | *400000* |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ Կոտայքի մարզպետարան
ք.Հրազդան, Կենտրոն վարչ.շենք
**ՀՀ ՖՆ գործառնական վարչություն**
**900121120050**
հվհհ 03029935
Մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝Լ.Պետրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
**ԱՁ«Հմայակ Միրզոյան»**
**Ք.Երևան,Արագածի փողոց 26/14**
**«Ինեկոբանկ» բանկ ՓԲԸ**

**h/h 2051232153571001**
հվհհ 35207868
**տնօրեն՝Հ.Միրզոյան**

(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված 4*
*« » հունվարի 2025 թ. կնքված*
*«ԿՈՏ-ՄԱԾՁԲ-25/5» ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 4.1*
*«  » հունվարի 2025__թ. կնքված*
*«ԿՈՏ-ՄԱԾՁԲ-25/5» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20__թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20__թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց** **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
ստորագրություն ստորագրություն